ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

17.02.2025թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ռ.Մարգարյանը, Ա.Մատինյանը, Մ.Խեչումյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը, Գ.Բաղդասարյանը, Ա.Մալոյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետն առաջարկեց ստորաբաժանումների ղեկավարներին ներկայացնել նախկինում տրված հանձնարարականների կատարման ընթացքի, ինչպես նաև առաջ եկած խնդիրների ու դրանց լուծմանն ուղղված առաջարկների վերաբերյալ տեղեկատվություն:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Գ.Մելիքսեթյանը ներկայացրեց անձնակազմի կառավարման բաժնի կողմից իրականացված և նախատեսվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես աշխատակազմի կողմից հայտարարված մրցույթների, դրանց մասնակիցների, գործուղումների և անձնակազմի գործառույթների իրականացման հետ կապված, ինչպես նաև մարզպետի կողմից քաղաքացիների ամենամսյա ընդունելության արդյունքների և առաջացած խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետն իր դիտարկումները և դժգոհությունը հայտնեց ներկայացված տեղեկատվության, մասնավորապես գործուղումների և քաղաքացիների ընդունելության ժամանակ բարձրացված հարցերին ընթացք տալու, սահմանված ժամկետներում հաշվետվություն չներկայացնելու վերաբերյալ և հանձնարարեց դրսևորել հետևողականություն՝ տրված հանձնարարականները կատարել սահմանված կարգով ու ժամկետներում և ներկայացնել ամբողջական ու սպառիչ տեղեկատվություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

3. Մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ Է. Հախվերդյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների

և տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես ՀՀ «Հողային օրենսգրքում» նախատեսվող փոփոխությունների ու սեփականատերերի գործառույթների փոփոխման և դրա ազդեցության ու հետևանքների վերաբերյալ տեղեկատվություն:

4. Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող՝ համայնքների հետ տարվող աշխատանքների և վերահսկողական գործառույթների վերաբերյալ տեղեկատվություն:

5. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից սուբվենցիոն և պետական ծրագրերով իրականացվող աշխատանքների, դրանց վերաբերյալ մոնիտորինգի, շրջայցերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ հայտնեց, որ 15 սուբվենցիոն ծրագրեր ներկայացվել են վերադասի կողմից համաձայնեցման և աշխատանքներ են իրականացվում՝ նոր ծրագրերի փաթեթներ ներկայացնելու ուղղությամբ, հայտնեց նաև, որ մարզպետի խորհրդական Ն.Թովմասյանի հետ համատեղ կազմվել է ժամանակացույց՝ շինարարական օբյեկտներում պարբերական շրջայցեր կատարելու նպատակով:

Լոռու մարզպետը հանձնարարեց շրջայցերի ընթացքում հիմնական շեշտը ուղղել ավարտական փուլում գտնվող և խնդրահարույց օբյեկտների աշխատանքների վերահսկմանը, լինել հետևողական կատարվող շինարարական աշխատանքների որակի և ժամկետների, ինչպես նաև՝ նոր ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվող փաստաթղթային փաթեթների ամբողջականացման հարցերում և կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

6. Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանը ներկայացրեց վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, հայտնելով, որ ներկայումս ընթանում են առարկայական օլիմպիադայի մրցույթները, որի վերաբերյալ անհրաժեշտ է լուծում առաջարկել օլիմպիադայի մասնակիցների տրանսպորտային տեղափոխման և ֆինանսավորման հետ կապված խնդիրների վերաբերյալ:

Մարզպետն առաջարկեց քննարկել և ներկայացնել կանոնակարգված և օրինական առաջարկներ տրանսպորտային տեղափոխումների, ինչպես նաև թափուր աշխատատեղերի համալրման ուղղությամբ մրցույթների հայտարարությունների առավել հրապարակային և տարբեր լրատվամիջոցներով ու եղանակներով ներկայացման վերաբերյալ:

7. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանը ներկայացրեց կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն, մասնավորապես՝ բժշկական կազմակերպություններ կատարած շրջայցերի, սուր շնչառական վարակներով հիվանդացածության (որը անկման միտում ունի), ինչպես նաև՝ քաղաքացիների հետ տարվող տարաբնույթ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Մարզպետը հանձնարարեց շարունակել ստուգայցերը առողջապահական հիմնարկներ, արձանագրել առկա խնդիրները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ դրանց վերացման ուղղությամբ, հիմնական շեշտադրումը կենտրոնացնել ծառայությունների և սպասարկման որակի բարձրացմանը, քաղաքացիների կողմից դժգոհությունների բացառմանը, հաշվի առնելով, որ քաղաքացիների բողոքներին և առաջարկություններին առողջապահական հիմնարկների ղեկավարները պետք է վերաբերվեն անձնական պատասխանատվությամբ, և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

8. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացված աշխատանքների մասին

տեղեկատվություն, մասնավորապես՝ բյուջետային գործընթացի և ֆինանսավորման հետ կապված աշխատանքների պլանավորման, այդ թվում նաև մարզպետարանի պահպանման ծախսերի արդյունավետ օգտագործման վերաբերյալ:

Մարզպետը հանձնարարեց մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին և ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին՝ համատեղ քննարկել և սեղմ ժամկետում ներկայացնել առաջարկություն՝ մարզպետարանի շենքի ընթացիկ վերանորոգման համար նախատեսված միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ:

9. Մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Մալոյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ Լոռու մարզպետի աշխատակազմի հաշվետվության սահիկաշարի (պատրաստման վերջնաժամկետը՝ 28.02.2025թ.), այլ պետությունների կառույցների և արտասահմանյան կազմակերպությունների հետ իրականացվող աշխատանքների և զբոսաշրջության հետ կապված հարցերի վերաբերյալ:

Մարզպետը հանձնարարեց՝

9.1 Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին և աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Մալոյանին.

Համատեղ կրկին անգամ քննարկել ֆրանսիական կողմից ստացված ներդրումային ծրագրի փաթեթը, կոնկրետ լուծումներ առաջարկել և սեղմ ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

9.2 Մարզպետի աշխատակազմի տորաբաժանումների ղեկավարներին.

Անհրաժեշտ աշխատանքներ տանել՝ ըստ ոլորտների անցկացվող կամ նախատեսվող միջոցառումների Լոռու մարզում կազմակերպման և անցկացման ուղղությամբ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջոցառումը կարող է խթանել զբոսաշրջության զարգացմանը:

10. Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանը ներկայացրեց ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես՝ Փամբակ համայնքի Արջուտ բնակավայրի տարածքում տեղակայված աղբավայրի ինքնահրկիզման, դրա հետևանքների վերացման, գյուղատնտեսությանը հասցված վնասների փոխհատուցման և այլ հարցերի վերաբերյալ:

Մարզպետը հանձնարարեց՝

10.1 Աշխատակազմի գյուղատնտոսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին.

Ուսումնասիրել Գյուլագարակ համայնքի կողմից ներկայացվող 2024 թ. ընթացքում տեղի ունեցած կարկտահարության վերաբերյալ նյութերը, և հարցին սահմանված կարգով լուծում տալու նպատակով՝ համապատասխան գրությունով դիմել շահագրգիռ նախարարություններ ու գերատեսչություններ:

10.2 Աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանին.

Համատեղ քննարկել և ներկայացնել առաջարկություններ՝ մարզի աղբավայրերի հետ կապված գործառույթների սահմանման, իրականացման, դրանց գործունեության

նկատմամբ վերահսկման, անհրաժեշտության դեպքում՝ նաև գործառույթների փոփոխության վերաբերյալ:

11. Մարզպետը հանձնարարեց՝

11.1 Աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Կ.Ադամյանին.

Անհրաժեշտ տեղեկատվական և խորհրդատվական միջոցառումներ իրականացնել եկամուտների պարտադիր հայտարարագրման գործընթացի պատշաճ լուսաբանման և հանրությանը ներկայացման ուղղությամբ, այդ նպատակով հնարավորինս օգտագործելով զանգվածային լրատվամիջոցները և այլ տեղեկատվական հարթակները:

11.2 Մարզպետի աշխատակազմի տորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ ուշադրություն դարձնել տրված հանձնարարականների կատարմանը, տրված բոլոր հանձնարարականների կատարման նկատմամբ դրսևորել անձնական և անհատական պատասխանատվություն, բացառել ժամկետների ուշացումները, բացթողումները, հանձնարարականներով տրված հարցերին տալ ամբողջական և օբյեկտիվ լուծումներ և սահմանված կարգով ու ժամկետներում ներկայացնել հաշվետվություններ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-02-19 11:39:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան,
Հեռ. 0322 /4-32-99